Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 14 -ի N 337 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են համապատասխանության ազգային նշանի (այսուհետ՝ համապատասխանության նշան) կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն այն իմաստը, որը սահմանված է «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում:

3. Համապատասխանության նշանը կիրառվում է կանոնակարգվող ոլորտում արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք) համար և ցույց է տալիս, որ արտադրանք արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվող նրա լիազոր ներկայացուցիչը գործող տեխնիկական կանոնակարգերի բոլոր պահանջներով համոզվել է արտադրանքի համապատասխանության մեջ՝ տվյալ արտադրանքը ենթարկելով համապատասխան տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման ընթացակարգերին:

4. Այն արտադրանքի համար, որի վրա տարածվում են համապատասխանության նշանի կիրառում նախատեսող մի քանի տեխնիկական կանոնակարգեր, տվյալ նշանով

մակնշումը ցույց է տալիս տվյալ արտադրանքի՝ բոլոր կիրառելի տեխնիկական կանոնակարգերի պահանջների համապատասխանությունը:

5. Կանոնակարգվող ոլորտի այն արտադրանքը, որի տեխնիկական կանոնակարգը նախատեսում է համապատասխանության նշանի կիրառում, պետք է մակնշվի համապատասխանության նշանով:

6. Համապատասխանության նշանը դրոշմվում է տեխնոլոգիական ցանկացած եղանակով, որն ապահովում է արտադրանքի շահագործման ամբողջ ընթացքում պատկերի ամբողջականությունը, հստակությունն ու վերջինիս ջնջվելու (մաքրվելու) հնարավորության բացառումը:

7. Տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության նշանը կիրառվում է տվյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող և դրա օբյեկտ հանդիսացող ամբողջ արտադրանքի համար: Տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի դեպքում համապատասխանության գնահատման նշանակված մարմինը համապատասխանության նշանը տրամադրելիս կցում է այդ մարմնի համար նախատեսված նույնականացման կոդը:

8. Հայաստանի Հանրապետությունում համապատասխանությունը հավաստող համապատասխանության նշանը կարող է կիրառել միայն արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը:

9. Համապատասխանության նշանի տրամադրման կամ օգտագործման համար վճար չի գանձվում:

10. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու դեպքում համապատասխանության նշանը դրվում է արտադրանքի փաթեթի կամ պիտակի վրա, իսկ գործընթացների համար՝ օգտագործվում է գովազդային նյութերում:

11. Համապատասխանության նշանով նույն արտադրանքը միաժամանակ կարող է կրել նաև այլ համապատասխանությունը փաստող օտարերկրյա նշաններ՝ պայմանով, որ համապատասխանության նշանի հետ տվյալ նշանները թյուրիմացություն չեն առաջացնի: Այլ նշաններ կարող են կիրառվել այն պայմանով, որ նշանների կիրառման հետևանքով համապատասխանության նշանի տեսանելիությունն ու հստակությունը չեն վատթարանա:

12. Տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման չենթարկված արտադրանքի և գործընթացների համար արգելվում է համապա-տասխանության նշանի կիրառումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 14 -ի N 337 - Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ (ՆԿԱՐԱԳԻՐԸ)

1. Համապատասխանության նշանը բաղկացած է հետևյալ տառերից՝ Հ, Տ և Կ, ինչը համապատասխանաբար նշանակում է «Հայաստանի տեխնիկական կանոնակարգ»:

2. Համապատասխանության նշանի գրաֆիկական պատկերը ներկայացված է N 1 ձևում:

3. Համապատասխանության նշանը կիրառելիս պետք է ապահովվի համապատաս-խանության նշանի հստակությունը և տեսանելիությունը, ինչպես նաև մակնշվածքի ամրությունը:

4. Համապատասխանության նշանի տառերն իրարից տարանջատվում են սպիտակ ֆոնով: Համապատասխանության նշանի յուրաքանչյուր տառի արտաքին և ներքին շերտերը սև են՝ մեջտեղում տարանջատվելով սպիտակ ֆոնով:

5. Համապատասխանության նշանի բարձրության և լայնության միջև պետք է պահ-պանվի 2:5 հարաբերակցություն: Համապատասխանության նշանի բարձրությունը պետք է լինի 5 մմ-ից ոչ պակաս:

6. Համապատասխանության նշանի ներքևի մասում պետք է նշվի տվյալ մարմնի համար նախատեսված նույնականացման կոդը:

Ձև 1. Համապատասխանության նշանի գրաֆիկական պատկեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

13_0337